

ST. LEON'S ARMENIAN CHURCH  
FAIR LAWN, N. J.

ANNUAL

REPORT

19

71

ՏԱՐԵԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄՐԲՈՑ ՂԵՒՈՐՇԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ  
ՑԵՐԼՈՆ, Ն.Ջ.

ST. LEON'S ARMENIAN CHURCH

ANNUAL PARISH ASSEMBLY

Sunday, January 30, 1972

ՏԱՐԵԿԱՆ ԾԻԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կիրակի, Յունուար 30, 1972

The Pastor and the Parish Council invite the parishioners to attend the Annual Parish Assembly on Sunday, January 30, 1972 following church services.

Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Հովիւն ու Հոգաբարձութիւնը, սիրով կը հրաւիրեն բոլոր ծխականներն ալ, ներկայ ըլլալու ՏԱՐԵԿԱՆ ԾԻԱԿԱՆ ԺՈՂՈՎի որ տեղի պիտի ունենայ Կիրակի, Յունուար 30, 1972, յաւարտ Ս. Պատարագի:

AGENDA

ՅԱՅՏԱԳԻՐ

- Opening Prayer
- Verification of Eligible Voters
- Election of the Assembly Officers
- Reading of 1971 Meeting Minutes
- Report of the Pastor
- Report of the Parish Council
- Report of the Church Organizations
- Financial Report & Budget for 1972
- Election of Diocesan Delegates
- Election of Parish Council Members
- New Business
- Closing Prayer

- Բացման աղօթք
- Ստուգում տրատու անդամներու
- Ընտրութիւն ժողովի ղիւանի
- Ընթերցում 1971ի ժողովի արձանագրութեան
- Տեղեկատուութիւն Հովիւի
- Տեղեկագիր Հոգաբարձութեան
- Տեղեկագիր կազմակերպութեանց
- Տեղեկագիր տնտեսականի եւ նոր պիւտճէ
- Ընտրութիւն Պատգամաւորներու
- Ընտրութիւն Հոգաբարձութեան
- Այլ հարցեր
- Փակման աղօթք

All those who have paid their 1971 church dues will have the right to vote. Please meet this obligation before the Assembly date, January 30th.

Անոնք որոնք վճարած են իրենց 1971 տարուան տարետուրքը, իրաւունք պիտի ունենան քուէարկելու: Ուրեմն հաճեցէք ձեր անդամատուրքերը վճարել ժողովէն առաջ:

It is the duty of each church member to be present and actively participate in this important meeting.

Բոլոր ծխականներն ալ պարտականութիւն պէտք է նկատեն, ներկայ ըլլալ Տարեկան Ծխական Ժողովին, եւ իրենց մասնակցութիւնը բերել ժողովի աշխատանքներուն:

PASTOR AND PARISH COUNCIL

ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ST. LEON'S ARMENIAN CHURCH  
Fair Lawn, N.J.

ANNUAL PARISH ASSEMBLY  
Sunday, January 30, 1972

LIST OF CANDIDATES FOR  
DIOCESAN DELEGATES ELECTION

Vote by checking (X) 3 persons only

Sarkis Bedevian.....	38
Hagop Demirdjian.....	8
Noubar Jessourian.....	25
Mirjan Kirian.....	34
Charles Pinajian.....	55
Tony Tungrian.....	17
Alfred Voskian.....	47

LIST OF CANDIDATES FOR  
PARISH COUNCIL ELECTION

Vote by checking (X) 4 persons only

Zaven Dadekian.....	69
Apraham DerAprahamian.....	22
Jerry Donabedian.....	38
Sebouh Jessourian.....	35
James Soojian.....	47
Richard Tomasian.....	43
Jacque Tossounian.....	11
Vahram Varjabedian.....	41

ՍՐՐՈՑ ՂԵՒՈՆՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ  
Ֆերլոն, Ն. Ճ.

ՏԱՐԵԿԱՆ ԾԻԱԿԱՆ ԺՈՂՈՎ  
Կիրակի, Յունուար 30, 1972

Պատգամաւորներու Ընտրութեան  
Թեկնածուներու Ցանկ

Քուէարկեցէք 3 անձի մայն՝ խաչանշեւով

Սարգիս Պետեւեան.....	
Յակոբ Տէմիրճեան.....	
Նուպար Ճեսուրեան.....	
Միրճան Գիրեան.....	
Չարլզ Փինէճեան.....	
Թոնի Թընկերեան.....	
Ալֆրէտ Ոսկեան.....	

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ  
Թեկնածուներու Ցանկ

Քուէարկեցէք 4 անձերու միայն՝ խաչանշեւով

Չաւէն Տատէքեան.....	
Աբրահամ Տէր Աբրահամեան.....	
Ճէրի Տօնապետեան.....	
Սեպուհ Ճեսուրեան.....	
Ճէյմս Սուճեան.....	
Ռիչըրտ Թոմասեան.....	
Ժազ Թոսունեան.....	
Վահրամ Վարժապետեան.....	

ՀՈՎԻԻԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԻՐԵԼԻ ԾԽԱԿԱՆՆԵՐ,

Մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ, 1971 տարին եւս պիտի նկատուի արդիւնաւոր տարի մը: Եւ ես փառք կուտամ Աստուծոյ որ մենք բոլորս միատեղ, կարողացանք նորանոր յառաջդիմութիւններ կատարել, մեր սիրելի Սրբոց Ղեկոնդեանց եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Որպէս ձեր Հովիւը, նախ իմ շնորհակալութիւններս կուզեմ յայտնել բոլորիդ որ այնքան նուիրումով գործեցիք եւ ձեր բարոյական ու նիւթական բոլորանունը աջակցութիւնը բերիք: Արդարեւ ձեր ներդաշնակ գործակցութեան շնորհիւ կարելի եղաւ լաւապէս իրագործել մեր ծուխին հոգեւոր, կրթական, մշակութային եւ ընկերային ծրագիրներն ու գործունէութիւնները:

Մասնաւոր շնորհակալութեան խօսք ունիմ բոլոր վարչութիւններուն, Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներու ուսուցիչներուն, Դպրաց Դասի անդամներուն եւ բոլոր մասնաւոր Յանձնախումբի անդամներուն: Արդարեւ ձեր բոլորին նւիրումին, համագործակցութեան եւ աշխատանքին շնորհիւ կարելի եղաւ յաջող տարի մը եւս բոլորել:

ՀՈՎԻԻԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ. - Հովիւին կողմէ 1971 տարուան ընթացքին կատարուած են հետեւեալ աշխատանքները.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ. - Ամբողջ տարուան ընթացքին կանոնաւոր կերպով կատարուած են թէ Կիրակնօրեայ եւ թէ մասնաւոր տօներու առիթով եկեղեցական արարողութիւններ, մեր հոգեւոր կեանքի հարստացման համար:

1971 տարուան մէջ մեր ծուխէն ներս ունեցած ենք Տ. Վարդան Քհնյ. Մըկըրեան, Հովիւ՝ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ, Լ'նկ Այլընտ, Ն. Ե. Կիրակի Մայիս 23ին: Առաջնորդարանի Կոմիտաս Խումբը մասնաւոր հրաւիրուած էր Կիրակի Սեպտեմբեր 15ին, հանգուցեալ Մամբրէ Արք. Գալֆանի մահուան տանջերորդ տարելիցի Պատարագին եւ Հոգեհանգիստին մասնակցելու համար, ինչպէս նաեւ Մատաղի օրհնութեան համար այս առիթով: Առաջին անգամ ըլլալով, թեմիս քահանայացու աստուածաբանական ուսանողներէն Մայքըլ Օհանեան եղաւ մեր ծուխին հետ Դեկտեմբեր ամսուան առաջին շաբաթավերջին: Մեր բոլորին կողմէ յաջողութիւն կը մաղթենք իրեն:

Այս տարի եւս քաղաքիս քոյր ամերիկեան եկեղեցիներուն հետ ունեցանք Աւագ Ուրբաթի միացեալ արարողութիւն:

ԾէՍ. - 1971 տարուան ընթացքին ունեցած ենք.

Մկրտութիւն՝ 15, Պսակ՝ 10, Թաղում՝ 9 նշանտուք՝ 1: Նաեւ այլ եկեղեցիներու մէջ կատարած ենք 3 Պսակ եւ 4 Թաղում:

ԺՈՂՈՎՆԵՐ. - Տարուան ընթացքին նախագահած ենք ծուխիս մէջ տեղի ունեցած բոլոր ժողովներուն: Ինչպէս նաեւ մասնակցած ենք մասնաւոր Յանձնախումբերու ժողովներուն: Ներկայ եղած ենք նաեւ շաբաթ մը ժողովներու մեր ծուխէն դուրս:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ. - Տարուան ընթացքին իմ կարելիս ըրած են, այցելելու բոլոր հիւանդներուն թէ հիւանդանոցներու եւ թէ տուններու մէջ: Նաեւ ժամանակիս ներած չափով թէ ցերեկները եւ թէ իրիկունները տուած են հովուական այցելութիւններ:

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ. - 1971ի ընթացքին գրասենեակէն ներս կատարուած են հետեւեալ աշխատանքները.

1. - Ամէն Կիրակի օրուան համար պատրաստած եմ անգլերէն-հայերէն քարոզներ:
2. - Ծուխիս ԼՐԱՏՈՒ Թերթիկը / 4-12/ ամէն ամիս կանոնաւորաբար հրատարակուած ու ղրկուած է 600 հասցէներու: Նաեւ զանազան այլ առիթներով մասնաւոր յայտարարութիւններ ու նամակներ պատրաստուած ու ղրկուած է ծխականներուն ու ծուխի բարեկամներուն:

30 էջնոց Տարեկան Գրկոյկը նորէն պատրաստուեցաւ եւ ղրկուեցաւ բոլոր ծխականներուն:

Այս առիթով կուզեմ յայտնել իմ մասնաւոր շնորհակալութիւններս Արամ Մազուճեան՝ պատրաստելուն համար մասնաւոր յայտարարութեանց բոստըրները, Երէցկին Ռոզին՝ կատարելուն համար բոլոր անգլերէն մեքենագրութիւնները, բոլոր անոնց որոնք գրութիւններ պատրաստեցին Թերթիկին համար եւ անոնց որոնք նկարներ առին Լրատուին համար:

3. - Այս տարի եւս գլխաւորեցի Հայ Դպրոցի աշխատանքները եւ հոգ տարի երգի բաժնին, ինչպէս նաեւ այլ կարգադրութեանց:
4. - Կանոնաւոր կերպով կատարած եմ բոլոր թղթակցութիւնները:
5. - Չանազան առիթներով ծխականներուն ղրկած եմ քարտեր:
6. - Ծխականներու հետ յարաբերութիւն պահած եմ նաեւ հեռաձայնով:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ. -

1. - Ապրիլ ամսուան վերջը, Գանատայի Մոնթրէալ քաղաքին մէջ գումարուած Եկեղեցական եւ Պատգամաւորական Ժողովներուն մասնակցած եմ, մեր ծուխի Պատգամաւորներու հետ միատեղ:
2. - Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, ստանցնած եմ Ատենապետութիւնը ԳԱԲԵԳԻՆ Կաթողիկոս Յովսէփեանի 100ամեակի տօնակատարութեանց Յանձնախումբին որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր ամսուան մէջ:
3. - Մասնակցած եմ նաեւ մեր շրջանի Հայ հոգեւորականներու ամսական հանդիպումներուն, ունենալու համար օգտաշատ մտքի փոխանակութիւններ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ. - Որպէս ձեր հովիւը կուզեմ ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալները.

1. - Նկատի ունենալով որ բոլորս ալ խճողուած ժամանակացոյցներ ունինք, մեր աշխատանքներուն եւ ընկերային յարաբերութեանց բերումով, դժբախտաբար շատ քիչ ժամանակ ձգած ենք մեր հոգեւոր եւ մշակութեային կեանքին համար: Դժբախտ իրողութիւն մըն է որ այսօր մարդիկ նուազ հետաքրքրութիւն ցոյց կուտան կրօնքի նկատմամբ ամէնուրէք: Բայց աստի, բոլորս ալ որպէս չափահասներ կզգանք կրօնքի կարեւորութիւնը մեր անձնական, ընտանեկան եւ համայնքային կեանքերէն ներս: Ուրեմն մեզի կը մնայ ժամանակ գտնել մեր եկեղեցւոյ գործերուն համար ալ եւ շքեռնաւորել միայն մի քանի հոգիներ, եթէ կուզենք որ որպէս անհատներ եւ ինչպէս նաեւ որպէս համայնք ըլլանք հոգեպէս եւ բարոյապէս քաջառողջ: Այն ատեն միայն կրնանք ունենալ նախանձելի դիրք ու կեանք ունեցող ծուխ մը:

2. - Ոչ մէկ հաստատութիւն կրնայ գոյատեւել եւ յառաջդիմել առանց նիւթական ապահով վիճակի: Հետեւաբար մենք բոլորս ալ պէտք է հարցնենք մենք մեզի, եթէ մեր արդար բաժնիները կուտանք իրապէս, մեր եկեղեցւոյ պայծառութեան համար: Վասնզի ձեր բոլորին նիւթական օգնութեան շնորհիւ կարելի պիտի ըլլայ ծուխին հոգեւոր, կրթական, մշակութային եւ ընկերային կարիքները հոգալ:

Թող Տէր Աստուած տայ բոլորիդ առողջ կեանք որպէսզի կարողանանք միատեղ աշխատիլ մեր բոլորին սիրելի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ պայծառութեան ազգիս յառաջդիմութեան եւ Աստուծոյ փառքին համար:

ԳԱՌՆԻԿ ՔԷՆՅ. ՀԱԼԼԱՃԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԾԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

1971 տարուան ընթացքին, Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Ծխականներուն հոգեւոր, կրթական եւ մշակութային կեանքը ունեցաւ նոր յառաջդիմութիւն: Անցեալ տարուան ընթացքին նոր ընտանիքներ եկան միանալու ծուխիս որոնց զաւակները միացան մեր Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներուն: Մեծ գոհունակութիւն կզգանք իրապէս որ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցին կարող է ծառայել հայ ժողովուրդի զաւակներուն Հիւսիսային նիւ ձըրզի մէջ: Այնուհանդերձ ըզգալի է պահանջքը նոր շէնքի մը որպէսզի կարելի ըլլար դպրոցներու եւ այլ ծուխի գործունէութեան համար:

Ասկէ երկու տարի առաջ, Ծխական Ժողովը իրաւասութիւն տուած էր Հոգաբարձութեան, քննելու կարելիութիւնները նոր շէնքի մը շինութեան մասին ուր կարելի ըլլար ունենալ դասարաններ եւ յաւելեալ սենեակներ մեծ սրահի մը կողքին: Արդէն իսկ ծրագիր մը պատրաստուած է Հոգաբարձութեան կողմէ եւ մեր փափաքն է որ բոլորդ ալ անխտիր համաձայն գտնուիք պատրաստուածին որպէսզի կարելի ըլլայ շուտով իրականացնել այդ խիստ կարեւոր ծրագիրը:

Մեր ծուխին տնտեսական վիճակը գովելի է շնորհիւ ձեր բոլորին գոհողութեան: Այնուհանդերձ պէտք է շարունակենք մեր նիւթական աջակցութիւնը առաւել չափով, որպէսզի կարողանանք մեր այլ ծրագիրները: Հետեւաբար կը խնդրենք բոլորէդ ալ որ անպայման գործածէք Շաբաթական Պահարանները: Այս տարի Շինութեան Ֆրոնտին կատարուած խոստումներուն վերջին տարին է: Փափաքելի է որ բոլորս ալ տարին չաւարտած մեր խոստումները կատարենք: Հետեւեալները կարգ մը գործեր են որոնք կատարուած են 1971 տարուան ընթացքին. -

1. - Պոլսոյ Ս. Խաչ Դպրեվանքին համար հաւաքուած՝ 1,390 տոլար
2. - Հանգուցեալ Տիար Թուխման Պազալեանի կտակէն ստացուած՝ 500 տոլար:
3. - Ծալլելու մեզենայ մը գնուած գրասենեակի համար:
4. - Եկեղեցւոյս ամբողջ շէնքը էրթընտիշըն եղած՝ 6,700 տոլարի, որուն 5,00 տոլարը նուիրուած է Ծխականներու կողմէ:
5. - նոր նստարաններ դրուեցան վերնատան մէջ Եկեղեցւոյ:
6. - Փարքինկ լաթի եւ տունին շուրջ նոր տրայվուէյ եւ սիմէնթի գործ եղաւ:
7. - Երկու պատանիններ դրկուեցան Ս. ներսէս ամառնային Սէմինարին:
8. - Փիքնիքի նստարաններն ու սեղանները ներկուեցան:
9. - Երիտասարդ հայ հիւանդ տղուն Արմէնին համար նուիրուեցաւ ձեր կողմէ 225 տոլար:

Այս առթիւ մեր մասնաւոր շնորհակալութիւնները Տէր Հօր, իր տուած շարունակական առաջնորդութեան համար: Ինչպէս նաեւ շնորհակալութիւնները Երէցկին Ռոզին, իր անխոնջ աշխատանքին համար: Շնորհակալութիւններ նաեւ բոլորիդ որ տեւապէս կը գործէք Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ պայծառութեան եւ յառաջդիմութեան համար:

Զաւէն Տատէքեան  
Ատենապետ Հոգաբարձութեան

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ՀԱՅ ԴՊՐՈՑ. - Այս տարի եւս եկեղեցւոյս Հայ Դպրոցը իր դռները լայն բացաւ ի խնդիր հայ մանուկին հայեցի դաստիարակութեան: ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԿԱԶՄ. - Հայ Դպրոցի ուսուցիչներն են. Գառնիկ Քհնյ. Հալլաճեան, Երէցկին Ռոզ Հալլաճեան, Տիկնայք՝ Սեդա Ճէսուրեան, Սաթենիկ Գազանճեան, Օրդ. Լինտա Գազանճեան, Պարոնայք՝ Շաւարշ Թորոսեան եւ Վահրամ Վարժապետեան: Գանձապահն է Ակնէս Գաբոյեան: Իսկ Պարի համար՝ Պրն. Կարօ Հոստաղեան եւ Տիկին Ալիս Շահինեան: Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնենք Տիկնայք Հէլէն Մարտիրոսեանին եւ Վարդուհի Գիրեանին որոնք 1971 դպրոցական տարեվերջին դադրեցան ուսուցչութենէ. յուսանք որ շուտով դարձեալ կը միանան մեզի: Վարձքերնիդ կատար կը սենք իրենց անխոնջ եւ նուիրեալ աշխատանքին համար:

1971-72 դպրոցական տարեշրջանին ունինք 40 աշակերտներ որոնք տարիքի եւ հաւ լեզուի իրենց ունեցած ծանօթութեանց համաձայն բաժնուած են հինգ դասարաններու: Դպրոցի ժամերն են ամէն Շաբաթ առաւօտ՝ ժամը 10-12: Այս տարուայ դասագիրքերն են՝ Վենետիկի Միխիթարեան Հայերու կոմէ պատրաստուած Այբբենարանը, Պոլսոյ Ուսուցչական Միութեան կողմէ հրատարակուած երկու դասագիրքեր եւ Պէյրութ տպուած Անի դասագիրքը: Տակաւին աշակերտները կը սորվին կարդալ, գրել եւ խօսիլ հայերէն. ինչպէս նաեւ ունինք երգ, պար եւ Հայոց Պատմութիւն: Իւրաքանչիւր աշակերտէն որպէս տարեվճար կը գանձուի 10 տուար, որպէսզի հոգացուի գիրքերու եւայլ ծախքերը: Հայ Դպրոցի աշակերտները կուսնան Հէլոին փարթի, Ծնողական Այցելութեան Օր, Քըրսմըսի Հաւաքոյթ, Այցելութիւն էմըրդընի Հայ Ծերանոցը, Դաշտագնացութիւն եւ Տարեկան Հանդէս:

Այս առթիւ կուզենք անգամ մըն ալ շեշտել Հայ Դպրոցի կարեւորութիւնը հայ մանուկին համար եւ կը խնդրենք ծնողներէ որ անպայման բերեն իրենց զաւակները Հայ Դպրոց, որպէսզի կարելի պայմաններու ներքեւ ջանանք սորվեցընել անոնց մեր մայրենի լեզուն եւ պատմութիւնը, երգը եւ պարը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ. - 1971-72 տարեշրջանին 156 փոքրիկներ արձանագրուեցան Կիրակնօրեայ Դպրոց: Ամէն Կիրակի առաւօտ, ժամը 10:30-12 կը կատարուին դասաւանդութիւնները եկեղեցւոյս սրահներուն մէջ: Կիրակնօրեայ Դպրոցի դասագիրքերը կը պատրաստուին եւ կը հայթայթուին Առաջնորդարանի Կրօնական Խորհուրդի կողմէ:

Կիրակնօրեայ Դպրոցը ունի երեք բաժիններ. 1. - ՄԱՆԿԱՊԱՐՏՏԷՋԻ ԲԱԺԻՆ. - Այս խումբին մէջն են մանուկներ մինչեւ երեք տարեկան որոնք կը հաւաքուին հովուատան ներքնամասը եւ հոն անոնց կը ցուցադրուի կրօնական մանկական պատկերներ խօսքի բաժինով միատեղ: Այս բաժնի պատասխանատուներն են. - Տնօրէնուհի՝ Տատի Բարամեան, Տիկնայք՝ Պարոլ Տէլ Գոնսուլ, ձանձթ Համալեան եւ Էլսի Թոսուսեան:

2. - ԿՐՏՍԵՐԱՅ ԲԱԺԻՆ. - Այս բաժինը ունի իր առանձինն հաւաքոյթը եւ առաւելաբար ուշադրութիւն կը դարձնեն Հին Կտակարանին: Այս խումբին Տնօրենուհին է Էնն Փէյս. եւ ուսուցիչներն են, Խոնա Թընկրեան, Տայէն Կիւլխասեան, Լինտա Գազանճեան, Մարիըն Նուրիկեան, Գարըլ Նազաշեան, Ճին Կարմիրեան, Պիլ Թիւֆէնք, Արաքսի Զիլինկիրեան, Գարէն Թընկրեան, Նէնսի Փէյս, Ռեբեկա Պազալեան եւ Սուզան Առաքելեան:

3. - ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԱԺԻՆ. - Այս բաժնին մէջ, կունենան Պաշտամունքի հաւ-  
քոյթ ուր կերգուին շարականներ եւ ապա՝ Տիկին Էլսի Տօնիկեան կը կարդա  
օրուայ Աւետարանը եւ կը բացատրէ: Կունենան նաեւ այցելու խօսողներ, ա-  
միսը անգամը, Հայ Եկեղեցւոյ եւ այլ այժմէական նիւթերու շուրջ: Այս  
խումբին Տեսուչն է Երէցկին Ռոզ Հալլաճեան եւ ուսուցիչները՝ Մէրի Հալլըր,  
Էլսի Տօնիկեան, Արփի Վարդանէսեան, Վարսէն Թորոսեան, ձորճ Մարութեան եւ  
Ռոզ Նաճարեան:

ՄԱՍՆԱԻՈՐ ՊԱՇՏՕՆՆԵՐ. -

Դպրապետուհի եւ Գանձապահ  
Ներկայ-Բացակայի  
Բարտ Ղրկող  
Փապլըսիթի  
Ատենաղպիր  
Բիանիսթնեթ

Հէլէն Վրրկա  
Կլորիա Թոմասեան  
Տորոթի Տէտէեան  
Վարսէն Թորոսեան  
Ռեբեկա Պագալեան  
Գարըլ Նագաշեան, ձորճ Մարութեան

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՀԱՐԱՆ. - Աշակերտներու Շաբաթական Պահարանի նուէրներէն կը  
գոյանայ շաբաթը մօտաւորապէս 23 տոլար: Ունին նաեւ Ս. Ծնունդի եւ Ս.  
Զատկուայ նուէրներ:

ԶԵՌՆԱՐԿՆԵՐ. - Տարուան ընթացքին Կիրականօրեայ Դպրոցը ունեցած է հետեւեալ  
ձեռնարկները. -

Ս. Հաղորդութիւն եւ Նախաճաշ Ս. Ծնունդի առիթով:  
Կիրականօրեայի աշակերտներու մասնակցութիւն Ոտնլուայի արարողութեան  
Ս. Հաղորդութիւն Ս. Զատկուայ առիթով եւ Նախաճաշ  
Ծնողներու այցելութեան օր  
Դաշտահանդէս  
Ամալերջի Հանդէս շրջանաւարտներու  
Վերամուտ եւ Յայտագիր  
Հալոուին փարթի  
Ընտանեկան Պաշտամունքի Օր  
Ամալերջի Հանդէս

Մեր շնորհակալութեան խօսքը ունինք բոլոր ուսուցիչներուն որոնք կամաւո-  
րապէս կուգան եւ նուիրումով կուսուցանեն մեր զաւակները, մեր հայրերուն  
սուրբ հաւատքովը: Շնորհակալութիւն նաեւ Տէր Հօր իր առաջնորդութեան հա-  
մար. ինչպէս նաեւ ծան Նաճարեանին՝ որ Հոգաբարձութեան ներկայացուցիչն  
է: Շնորհակալութիւն բոլոր ծնողաց որոնք կզգան կարեւորութիւնը կրօնա-  
կան դաստիարակութեան եւ կանոնաւոր կերպով կը բերեն իրենց փոքրիկները  
Կիրականօրեայ Դպրոց: Արդարեւ ձեր բոլորին համագործակցութեան շնորհիւ  
պիտի կարողանանք պատրաստել մեր եկեղեցւոյ վաղուան ծխականները, ի պայ-  
ծառութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ ի փառս Աստուծոյ:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ

ՏԻԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻԻՆ. - 1971 տարուան համար Միութեանս Վարչութեան անդամները եղած են.

Ատենապետ	Ակնէս Ոսկեան
Փոխ Ատենապետ	Վարսէն Թորոսեան
Գանձապահ	Էնն Խաչիկեան
Օգնական Գանձապահ	Էմմա Թարազաճեան
Ատենադպիր	Արլին Տատէթեան
Թղթակցութեան Բարտուղար	Կլորիա Թոմասեան
Խորհրդական	Ֆլորէնս Կիւլիսսեան

Իսկ նշանակովի պաշտօն ունեցած են.

Զանազան Գաղափարներու փալլըսիթի	Ֆլորէնս Կիւլիսսեան
Անդամներու	Էլսի Տօնիկեան
Հիւրասիրութեան	Լուսին Տապաղեան
Այցելութեան՝ Տըվի Թիւպեան, Մարիճա	Պերճուհի Վարժապետեան
Յայտագրի	Կիրակոսեան եւ Արտեմիս Ճըսրաէիլի
Բարտերու	Վարսէն Թորոսեան
Խոհանոցի Մաքրութեան	Լիլիըն Տի փալմա
	Հէլէն Թարզեան

Միութիւնս ունի 105 անդամներ եւ ժողովներուն միջին հաշուով 35 անձեր ներկայ կը լինին: Անցեալ տարուան ընթացքին տասը անդամական ժողովներ տեղի ունեցած են եւ Վարչական՝ հինգ: Իսկ ամսական հիւրասիրութիւնները կատարուած են անդամներուն կողմէ կարգով:

Ամէն ամիս ժողովէն ետք ունեցած ենք օգտաշատ եւ հետաքրքրական յայտագիրներ: Այս տարի եւս հայկական Միութեան հաւաքովի ունեցանք անդամներու համար: Իսկ Յունիս ամսուան ժողովէն ետք ունեցանք անպաշտօն ճաշկերոյթ ամուսիններով միատեղ:

Տարուան ընթացքին Միութիւնս կազմակերպած է հետեւեալ հասութեան ձեռնարկները. - ՁՈՒԿԻ ՃԱՇ ՄԵԾ Պահքին, ՌԱՄԷՃ ՍԷՅԼ Ապրիլին, ՔԱՐՏ ՓԱՐԹԻ Մայիսին, ԹԱԲԱԸՐՈՒԵՐ ՓԱՐԹԻ Մայիսին, ՃԱՇ Յունիսին, ՔԱՐՏ ՓԱՐԹԻ Սեպտեմբերին, ՏԱՐԵԿԱՆ ՊԱԶԱՐ նոյեմբերին, ՏՕՆԱԿԱՆ ՊԻԿԵՏ փալթի Դեկտեմբերին եւ Տարուան ընթացքին յաճախ կ'ինքն խումբով գացած են Լիվըր Պրատըրը Լապորթ-Թուար: Այս բոլոր ձեռնարկներէն ընդհանուր շահ մնացած է 7,254.69 տոլար:

Իրապէս Միութիւնս ունեցաւ գործունէութիւններով լեցուն տարի մը: Նոր անդամներ եկան շատցնելու թիւը անդամներուս եւ միատեղ բոլորս ունեցան հաճելի ընկերական խումբ մը եւ վայելեցին ընկերակցութիւնը իրարու Միութեանս տաք մթնոլորտին ներքեւ:

Այս առթիւ մասնաւոր շնորհակալութիւններս կուզեմ յայտնել Վարչութեան բոլոր անդամներուն, Յանձնախումբերու վրայ գործող անձերուն եւ բոլորիդ որ սիրով ու նուիրումով գործեցիք մեր սիրելի եկեղեցւոյ պայծառութեան համար: Մեր շնորհակալութիւնները նաեւ Տէր Հօր, իր տուած խորհուրդներուն եւ առաջնորդութեան համար: Կը մաղթեմ որ բոլորդ ալ միշտ ունենաք քաջառողջ վիճակ, որպէսզի կարենանք առաւել նուիրումով ծառայել մեր եկեղեցւոյ:

Ակնէս Ոսկեան  
Ատենապետ

ԴՊՐԱՑ ԴԱՍ

1971 տարեշրջանին, Դպրաց Դասի վարչութեան կազմը եղած է ըստ հետեւե-  
տալին. -

Ատենապետ	Զարլզ Փինէճեան
Ատենադպիր	Հէլէն Մազուճեան
Գանձապահ	Յակոբ Տէմիրճեան
Դպրապետ-Օրկընխոս	Լուսին Տապաղեան
Օգնական Օրկընխոսներ	Արլին Տատէքեան եւ Ճօրճ Մարութեան

Դպրաց Դասը ունի 4աւագ եւ 5 կրտսեր խորանի սպասարկողներ: Իսկ անդամներ-  
րուն թիւն է 22:  
Տարուան ընթացքին ունեցած ենք 3 վարչական եւ 7 անդամական ժողովներ:  
Ամբողջ տարին ունեցած ենք 20 փորձեր:  
1971ին երեք տարբեր առիթներով, Դպրաց Դասը այցելած է էմըրսընի Հայ Ծե-  
րանոցը եւ կատարած արարողութիւն:  
Ամէն Կիրակի, կանոնաւոր կերպով եւ հաւատարմօրէն Դպրաց Դասի անդամները  
մասնակցած են Կիրակնօրեայ եւ այլ տօնական օրերու արարողութեանց:  
Դպրաց Դասը այժմ մասնաւոր քառաձայն երգեր կը սորվի, ԴՊՐԱՑ ԴԱՍԻ ՕՐ ճաշ-  
կերոյթին համը որ տեղի պիտի ունենայ Յունուար ամսուան մէջ:  
Կը փափաքինք եւ կակնկալենք որ այլ անձեր եւս գան ու միանան Դպրաց Դասին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ընթացիք տարուան վարչութեան անդամները եղած են. -

Ատենապետ	Պիլ Թիւֆէնք
Փոխ Ատենապետ	Տայէնա Ամիրխանեան
Ատենադպիր	Մէրիըն Նուրիկեան
Թղթակցութեան Քարտուղար	Լիսա Զէքէմեան
Գանձապահ	Սթիվ Խաչիկեան
Խորհրդականներ /մայրեր/	Տըվի Թիւպեան եւ Ֆլորէնս Կիւլխասեան

Տարուան ընթացքին ունեցած ենք 9 վարչական եւ 9 անդամական ժողովներ:  
Իւրաքանչիւր անդամական ժողովէ ետք ունեցած ենք հետաքրքրական յայտաքիր-  
ներ եւ գործունէութիւններ:  
Ունեցած ենք երկու հասութեաբեր ձեռնարկներ. 1. - Երիտասարդաց Օրի ճաշկե-  
րոյթ 2. - Պէյք Սէյլ: Նիւթական հաշուէտուութիւնը կը գտնէք գրկոյկին անգ-  
լերէն բաժնին մէջ:  
Կազմակերպութիւնս այժմ ունի 38 անդամներ եւ կը յուսանք որ հետզհետէ ա-  
ւելնայ թիւը եւ դառնանք լաւագոյն Երիտասարդաց Կրտսերներու խումբը մեր  
շրջանին: Եկէք եւ միացէք:

ԳՐԱԴԱՐԱՆ

Անցնող տարուան ընթացքին եւս կարգ մը ազգայիններ նուիրեցին շարք մը գիր-  
քեր, ճոխացնելու համար եկեղեցւոյս գրադարանը: Կարելի եղաւ նաեւ քանի մը  
անգլերէն նոր գիրքեր գնել, հայ ժողովուրդի մշակոյթին եւ պատմութեան վե-  
րաբերեալ:  
Գրադարանս կանոնաւոր կերպով կստանայ շարք մը հայերէն եւ անգլերէն օրա-  
թերթեր, շաբաթաթերթեր, ամսաթերթեր եւ պարբերականներ: Անոնք որոնք կը փա-  
փաքին կրնան գրադարանց այցելել ամէն Կիրակի առաւօտ ժամը 10-12: Գրադա-  
րանին պատասխանատուներն են Տէր Հայրն ու Սեպուհ Ճէսուրեան:

ՊԱՍՔԷԹ ՊՈԼԻ ԽՈՒՄԱԸ

1971 տարեշրջանին եւս ունեցանք Պասքէթ Պոլի խումբ մը, շնորհիւ կարգ մը ծխականներու զոհողութեան: Խումբին պատասխանատու անձերն են. -

Խմբապետ /Քոչ/  
Ներկայացուցիչ  
Խումբի անդամներն են

Ճէք Թարգեան  
Ճէյմս Սուճեան  
Սթիվ Աբրահամեան, Հավըրտ Քլարք, Տրու  
Տապաղեան, Ճան Հապուպ, Սթիվըն Խաչիկ-  
եան, Մարք Քէշիշեան, Ճէյ Սուճեան,  
Ուիլիլմ Թիւֆէնք, Ալան Թոսուներեան,  
Կրէկորի Ոսկեան եւ Էնթընի Եէնիճէեան:

Հայ եկեղեցիներու Մարզական Կազմակերպութիւնը պիտի ջանայ մօտիկ ապագային ունենալ նաեւ այլ տեսակի մարզական խաղեր: Փափաքելի է որ ծնողներ քաջալերեն իրենց զաւակները, որպէսզի անոնք մասնակցին մարզական խաղերու:

ՄՇԱԿՈՒԹԱՅ ԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԱ

Եկեղեցւոյս Մշակութային Յանձնախումբը ծուխէն ներս չկրցաւ գործունեայ շրջան մը ունենալ, նկատի ունենալով որ Յանձնախումբի գլխաւոր անձեր իրենց ժամանակը տրամադրեցին Առաջնորդարանի կարգ մը ձեռնարկներուն: Այնուհանդերձ թէ Ս. Մնունդի ձրագալոյցին եւ թէ Ս. Զատկուայ խթման արարողութիւններէն ետք ժողովուրդին հրամցուեցան հետաքրքրական յայտագիրներ:

Կը յուսանք եւ կանկալենք որ 1972 տարուան ընթացքին կարենանք առաւել գործունէութիւն ցոյց տալ:

Այցելութեան Յանձնախումբ

Թէեւ անունը Այցելութեան Յանձնախումբ կոչած ենք, բայց իրականութեան մէջ, յանուն եկեղեցւոյս ուրախ թէ տխուր առիներով ծխականներուն քարտեր են որ կը ղրկուին, այդպէսով մեր մաղթանքը ըրած ըլլալու համար: Այնուհանդերձ, կը յուսանք որ այս կը վերածուի օր մը ճմարիտ Այցելութեան Յանձնախումբի մը:

Քարտետ ղրկուելու պատասխանատուութիւնը այս տարի եւս ստանցնած էր Ակնէս Գաբոյեան: 1971 տարուան ընթացքին 126 քարտեր ղրկուած են ծխականներու, ուրախ թէ տխուր առիթներով:

1972 տարուան ընթացքին եւս պիտի շարունակուի այս գեղեցիկ սովորութիւնը եւ Ակնէս Գաբոյեան սիրայօժար պիտի շարունակէ:

## PASTORAL REPORT

Dear Parishioners,

The year 1971 was another fruitful period of time in the history of St. Leon's Parish. And I thank God for all the achievements that we were able to do for the progress of our church and for His everlasting glory.

As your pastor, my sincere thanks go to you all for your continues financial and moral support to our beloved St. Leon's Church. For through your devotion and service it was possible to carry forward our spiritual, cultural, educational and social activities.

My special thanks go to all the Executive Committees, Armenian and Sunday School teachers and Choir members. Indeed through your untiring efforts, dedication and cooperation, our evergrowing community was able to end another successful year.

### PASTORAL ACTIVITIES

#### Worship

With the help of God, we were able to have regular Sunday Services throughout the year and special services on various holidays for the enhancement of our spiritual life and for the glory of God.

During 1971 we were privileged to have with us as guest celebrant Rev. Vartan Megherian, Pastor of Holy Martyrs Church of Long Island on May 23. We also had Gomidas Choir with us on September 19 in order to have the Tenth Anniversary Memorial Service for the late Archbishop Mampre Calfayan. For the first time, one of the seminarians of our Diocese, Michael Ohanesian spent the first weekend in December with our parish. We wish him all the success in his endeavors.

Once again this year we had joint Good Friday Service with the neighboring American Churches.

## Rituals

In 1971 the total of the rituals were as follows:

Baptisms 15    Weddings 10    Funerals 9    Engagement 1

I also conducted and/or assisted at 3 weddings and 4 funerals in other sister churches.

## Meetings

During the past year I tried to preside over all the meetings of our organizations and of special committees. I also attended several other meetings outside of our parish.

## Visitations

In the year 1971, I tried my utmost to visit sick people in the hospitals and their homes; also gave as many family visitations as my schedule allowed me during the day and evenings.

## Desk Work

The following are the office work done by your pastor.

- a. Prepare sermon for every Sunday in both languages.
- b. Every month regularly parish newsletter Lradoo was published (4-12 pages) and mailed to 600 families. Also numerous circulars and flyers were prepared for various occasions and affairs and mailed to our faithful. Annual Report Booklet was prepared and mailed to church members. At this time, my special thanks go to Aram Mazoujian for preparing all the posters, Yerezgin Rose for doing all the office English typing and to all church organizations reporters and all those gentlemen for taking pictures for our Lradoo.
- c. Heading the Armenian School.
- d. Do all the correspondence.
- e. Send cards on happy and sad occasions.
- f. Kept in touch with people by telephone.

## Diocese

- a. I attended both Clergy Conference and annual Diocesan Assembly at Montreal, Canada to represent with the delegates our parish.
- b. By the invitation of the Primate, Archbishop Torkom Manoogian, I assumed the chairmanship of the Centennial Celebration of the late Catholicos Garegin Hovsepian, sponsored in New York-New Jersey area in October.
- c. I also attended monthly meetings of our clergy in this area in order to exchange ideas and benefit from each other's experience.

## Suggestions

As your pastor, I would like to make the following suggestions:

- a. Due to our daily involvement and overlapping social commitments, we have very little time left for our spiritual life. It is not a secret that people today all around the world, unfortunately, take less interest in religion. But as mature adults we know that religion is important and we must really be more involved with the church. Yet, we don't do that and leave the burden upon the shoulders of few people. If we want a dynamic parish then we all must be willing to share the responsibilities.
- b. No institution can function properly and achieve progress without adequate financial source of income. Therefore, you have to ask yourself if you are giving to your Church a fair share from your income. Only through your full financial support we can conduct all religious, cultural, educational, athletic and social activities of our church.

May God bless you and give you continues good health, so that we all together work for the future progress of our beloved St. Leon's Church and for the everlasting glory of God.

Prayerfully,

Rev. Carnig Hallajian

## PARISH COUNCIL

The spiritual, cultural, educational, and social life of St. Leon's and its parishioners showed continued progress and growth in 1971.

Several new families joined our Church this past year, continuing the strong trend towards growth of the past few years. Many of our new families have children as reflected in the registration and attendance of record numbers in our Sunday School and Armenian School. We can all derive great satisfaction from this growth and the opportunity it affords St. Leon's to serve the Armenian-American community in northern New Jersey. On the other hand, it is apparent that the physical resources of the Church have been taxed to the limit, and further growth will be hampered by lack of adequate facilities. This lack is especially critical as regards our Sunday School. New classrooms and adequate space are urgently needed.

